

**ՀՄՀ-Հայաստան
Մոնիտորինգի և գնահատման պլան**

Օգոստոս 2009

1. Ընդհանուր տեղեկություններ

2006 թ. մարտի 27-ին Ամերիկայի Միացյալ Նահանգները, գործելով հանձինս Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի (ՀՄԿ), և Հայաստանի Հանրապետության Կառավարությունը ստորագրեցին Համաձայնագիր, որի 3-րդ հավելվածով նախատեսվում է ՀՄՀ ծրագրի Մոնիտորինգի և գնահատման պլանի (ՄԳՊ) նկարագրությունը:

Մոնիտորինգը և գնահատումն (ՄԳ) անչափ կարևոր է ծրագրի արդյունահեն կառավարման տեսանկյունից: Այն ծրագրի կառուցվածքի կարևորագույն բաղադրիչ է հանդիսացել և ներկայումս նույնպես ընդգրկված է ծրագրային ցիկլի բոլոր օղակների մեջ՝ ընդհուպ մինչև ծրագրի ավարտ:

ՄԳՊ-ն ծառայում է հետևյալ նպատակներին.

- ՄԳՊ-ում մանրամասն բացատրված է, թե ՀՄԿ-ն և ՀՄՀ-Հայաստանն ինչպես են իրականացնելու իրենց տարբեր ենթածրագրերի մոնիտորինգը, որպեսզի պարզեն, թե արդյոք դրանք ապահովում են նախատեսված արդյունքները, և գնահատման միջոցով չափեն դրանց ավելի մեծ ազդեցությունը ժամանակի ընթացքում:
- ՄԳՊ-ի մեջ սահմանված են ՄԳ այն պահանջները, որոնք ՀՄՀ-Հայաստանը պետք է բավարարի, որպեսզի ստանա հատկացումներ:
- ՄԳՊ -ն ծրագրի իրագործման ու կառավարման ուղենիշ է, որը թույլ է տալիս ՀՄՀ-Հայաստանի Կառավարման գրասենյակի աշխատակիցներին, Կառավարման խորհրդի անդամներին, Շահառուների խորհրդի անդամներին, ծրագիրն իրականացնող կազմակերպություններին, ծրագրի շահառուներին և այլ շահագրգիռ կողմերին հասկանալ, թե ինչ նպատակների և թիրախների կատարման համար են իրենք պատասխանատու, և իրականացման ընթացքում տեղեկանալ այդ նպատակների և թիրախների ուղղությամբ իրենց կատարած առաջընթացի մասին:
- ՄԳՊ-ով նախատեսվում է որոշակի գործընթաց, որի միջոցով իրականացնող կազմակերպությունները, շահառուները և ՀՄԿ-ն կարող են տեղեկանալ ծրագրի իրագործման խնդիրների մասին, և որի հիման վրա հնարավոր է ծրագրում անհրաժեշտ ճշգրտումներ կատարել:

ՄԳ սույն պլանը իրավական առումով պարտադիր փաստաթուղթ է, որի դրույթներին չհետևելու դեպքում հատկացումները կարող են կասեցվել: Սույն պլանը կարող է ըստ անհրաժեշտության փոփոխվել կամ լրացվել միայն ՀՄԿ-ի համաձայնությամբ, ընդ որում, միմիայն եթե դա համապատասխանում է Համաձայնագրի և վերաբերելի այլ լրացուցիչ իրավական փաստաթղթերի պահանջներին:

2. Ծրագրի և նպատակների համառոտ նկարագրություն


Գյուղական տարածքներում բնակվող ավելի քան մեկ միլիոն հայաստանցիների (որը Հայաստանի բնակչության 35 տոկոսն է) կենսապահովումը կախված է գյուղատնտեսական արտադրությունից: 2004 թվականին ֆերմերային եկամուտները կազմել են գյուղացիական տնտեսությունների ընդհանուր եկամուտների ավելի քան 55 տոկոսը: Հաշվի առնելով ոչ գյուղատնտեսական զբաղվածության հնարավորությունների խիստ սահմանափակ լինելը, Հայաստանի գյուղական բնակչության կենսապահովումը կախված է փոքր ֆերմաներից:

Հայաստանում գյուղատնտեսության աճն ավելի մեծ ազդեցություն է ունեցել գյուղական աղքատության կրճատման վրա քան տնտեսական աճը: Մասնավորապես, տնային տնտեսությունների հետազոտությունների արդյունքները վկայում են, որ 2000-2004 թվականներին գյուղատնտեսության ոլորտի աճի յուրաքանչյուր տոկոսային կետը 2004 թ. դրությամբ հանգեցրել է գյուղական աղքատության 0.93 տոկոսով կրճատման: Հետևաբար, գյուղական աղքատության կրճատումը կախված է գյուղատնտեսության ոլորտի կայուն աճ ապահովելուն միտված կոնկրետ քաղաքականություններից ու ներդրումներից:

Հայաստանի հետ կնքված Համաձայնագրի ուղղակի նպատակն է կրճատել գյուղական աղքատությունը՝ գյուղական ճանապարհների վերականգնման և ոռոգվող գյուղատնտեսության հնարավորությունների ավելացման միջոցով բարելավելով գյուղատնտեսության ոլորտի տնտեսական ցուցանիշները: Ինչպես նշված է Համաձայնագրի III հավելվածում, ազդեցության գնահատումը մշակվելու է այնպես, որպեսզի պարզվի, թե Ծրագրի շնորհիվ որքանով է կրճատվում գյուղական աղքատությունը:

2009թ. հունիսին կայացած ՀՄԿ տնօրենների խորհրդի նիստի արդյունքում ՀՄՀ-Հայաստան ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագիրը շարունակում է կասեցված մնալ: Այդ պատճառով ՄԳ պլանը վարանայվել է այս փաստը հաշվի առնելով:¹ ՀՄՀ-Հայաստանի Ծրագրի նպատակները և արդյունքները կարելի է ամփոփ ներկայացնել հետևյալ կերպ.

¹ 2009թ. հունիսի 10-ին հրապարակված մամուլ հաղորդագրության մեջ ՀՄԿ Տնօրենների խորհուրդը հայտարարել է, որ ՀՄՀ-Հայաստան ծրագրի ֆինանսավորումն կասեցումը շարունակում է ուժի մեջ մնալ, և հայտնել, որ “ՀՄԿ-ն այլևս չի վերսկսի ճանապարհաշինության ֆինանսավորումը”
Հայաստանում:



ՀՄԿ-ի ֆինանսավորման համար ընտրվել են կոնկրետ այնպիսի աշխատանքներ, որոնց տնտեսական օգտակարության գործակիցը (ՏՕԳ) հավասար է կամ ավելի բարձր, քան վերջին երեք տարիներին Հայաստանի տնտեսական աճի միջին տեմպը (12.5%):² Բացի այդ, երկու ենթաձևերի մոնիտորինգային ցուցանիշները սերտորեն կապված են ենթաձևերի վերանայված տնտեսական վերլուծության ընթացքում օգտագործված ենթադրությունների հետ:

Հիմնվելով հավելված Գ-ում ներկայացված ՀՄՀ-Հայաստանի շահառուների վերանայված վերլուծություն վրա՝ ՀՄՀ-Հայաստանն ակնկալում է, որ Համաձայնագրի շրջանակներում ծրագրային միջամտություններից օգտվող շահառուների ընդհանուր թիվն առանց կրկնակի հաշվարկի կկազմի 427,763 մարդ:

(ա) Ենթաձևերի 1. Գյուղական ճանապարհների վերականգնում /ԳՃՎԾ/

ՀՄՀ-Հայաստան ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնման ենթաձևերի նպատակը տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքի հասանելիության բարելավումն է՝ գերակա համարվող և կենսական նշանակության ճանապարհային ցանցի մեջ մտնող գյուղական ճանապարհների վերականգնման միջոցով: Ծրագրի նախնական ՏՕԳ-ը 26 տոկոս էր, ինչը հիմնված էր նախքան

² Սահմանային այս ցուցանիշը համապատասխանում է 2005 թ. նոյեմբերի դրությամբ ՀՄԿ-ի կողմից կիրառվող Տնտեսական վերլուծության ուղենիշներին (MCC Guidelines for Economic Analysis):

տեխնիկա-տնտեսական վերլուծությունների անցկացումն առկա տվյալների վրա: Բոլոր ճանապարհահատվածները, որոնք ընդգրկվել էին ծրագրում ԳՃՎԾ վերանայումից հետո անցել են ՏՕԳ համար սահմանված 12.5 տոկոս նվազագույն շեմը, սակայն ողջ ծրագրի համար նոր ՏՕԳ չի հաշվարկվել:

Ծրագրի ակնկալվող արդյունքները, ծրագրի վերանայումից առաջ և հետո հաշվարկված շահառունի թիվը, ինչպես նաև ծրագրին առնչվող ամենավերջին փոփոխությունները ներկայացվում են ստորև բերված աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1: ՀՄՀ-Հայաստան ծրագրի Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագիր			
	Համաձայնագիր	2008թ. հունվարի դրությամբ	2009թ. հունիսի 1-ի դրությամբ
Վերականգնված ճանապարհահատվածներ	943 կմ	297 կմ	24.4 կմ
Շահառուների թիվ	360,000 գյուղական բնակիչ	142,909 գյուղական բնակիչ	6,356 գյուղական բնակիչ
Շահառու համայնքների թիվ	260	84	12

(բ) Ենթածրագիր 2. Ոռոգվող գյուղատնտեսություն /ՈԳ/

ՀՄՀ-Հայաստան ծրագրի Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի նպատակը գյուղատնտեսության արտադրողականության բարձրացումը և ոռոգման որակի բարելավումն է՝ ոռոգման ենթակառուցվածքում կատարված ներդրումների, տեխնիկական աջակցության և հասանելի վարկավորման միջոցով:

ՈԳ ենթածրագիրը բաղկացած է երկու առանձին բաղադրիչներից. Ոռոգման ենթակառուցվածք և Ջրից դեպի շուկա: Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի նախնական ՏՕԳ-ը 25 տոկոս էր, ինչը հիմնված էր ծրագրի նախապտրաստական փուլում նախքան տեխնիկա-տնտեսական վերլուծությունների անցկացումն առկա տվյալների վրա:

Բաղադրիչ 1. Ենթակառուցվածք

Ենթակառուցվածք բաղադրիչի վերանայման փուլում նոր ՏՕԳ-երը հաշվարկվել են տեխնիկա-տնտեսական ուսումնասիրություններում և նախագծերում առկա տվյալների հիման վրա: Ենթակառուցվածք բաղադրիչի վերանայման արդյունքում ծրագրում մնացած բոլոր բաղադրիչներն անցել են ՏՕԳ համար

սահմանված 12.5 տոկոս նվազագույն շեմը, սակայն ողջ ծրագրի համար նոր SOԳ չի հաշվարկվել:

Ենթակառուցվածք բաղադրիչի վերաբերյալ հիմնական տվյալները ծրագրի վերանայումից առաջ և հետո ներկայացվում են ստորև բերված աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2: ՀՄՀ-Հայաստան ՈԳ ենթածրագիր. Ենթակառուցվածք բաղադրիչ			
	Համաձայնագիր	Ծրագրի վերանայումից հետո, 2008թ. հոկտեմբերի դրությամբ	2009թ. հուլիսի 1-ի դրությամբ
Ջրամբարներ (թիվ)	7	0	0
Ինքնահոս համակարգեր (թիվ)	18	7	4 ³
Պոմպակայաններ (թիվ)	68	17	17
Մայր ջրանցքներ (կմ)	198	34	27,7
Երրորդային ջրանցքներ (կմ)	588	220	220
Դրենաժային համակարգեր (թիվ)	13	13	13
Շահառուների ընդհանուր թիվ ⁴	152,000	106,161	421,407
Շահառու համայնքների թիվ	362	286	298 ⁵

Բաղադրիչ 2. Ջրից դեպի շուկա

Ոռոգվող գյուղատնտեսություն ենթածրագրի Ջրից դեպի շուկա բաղադրիչը բաղկացած է երկու ենթաբաղադրիչներից. (ա) Ոռոգման համակարգի

³ Ինքնահոս համակարգերի թիվն իջել է 7-ից 4-ի ծրագրի պաշտոնական վերանայման ավարտից հետո՝ տեխնիկական և տնտեսական նկատառումների պատճառով: Սակայն ՀՄՀ-Հայաստանը և ՀՄԿ-ն ներկայումս քննարկում են դուրս մնացած ինքնահոսներից առնվազն երկուսի /Հալավար և Սպիտակ/ ծրագիր վերադառնալու հավանականությունը:

⁴ Շահառուների ներկայիս թվերը հաշվարկվել են նոր մոտեցման հիման վրա, որը կիրառվել է շահառուների հաշվարկը ՀՄԿ նոր ուղեցույցի պահանջներին համապատասխանեցնելու համար: Արդյունքում, “2009թ. հուլիսի 1-ի դրությամբ” պունյակում ներկայացված թվերը հիմնված են ծրագրում ընդգրկված համայնքների *առկա /դե ֆակտո/* բնակչության թվերի վրա, մինչդեռ “Համաձայնագիր” և “Վերանայում” պունյակներում այս թվերը հիմնված են ՋՕԸ-երի անդամների թվի վրա: Շահառուների վերլուծության մոտեցման մասին տե՛ս ՄԳ Պլանի Հավելված Ե-ն՝ ՀՄՀ-Հայաստան ծրագրի շահառուների վերլուծությունը:

⁵ 2009թ. հուլիսի դրությամբ շահառու համայնքների թիվը 2008-ի հոկտեմբերի համեմատ ավելի մեծ է, քանի որ շահառու համայնքների տվյալները թարմացվել են առկա ամենաթարմ տեղեկատվության հիման վրա:

ԶԴՇ բաղադրիչի Ոռոգման համակարգի կազմակերպությունների հզորացում ենթաբաղադրիչի /ՈՀԿՀ/ նպատակն է Հայաստանում ոռոգվող գյուղատնտեսության արդյունավետության և կայունության բարելավումը: Կառուցվածքային հզորացումը հիմնականում իրականացվելու է աշխատանքի վայրում վերապատրաստման, տեխնիկական խորհրդատվության և ուղղակի օժանդակության միջոցով, որոնք կամրացնեն ԶՕԸ-երի և վերջիններիս անդամ ֆերմերների տեխնիկական, կառավարչական, ինստիտուցիոնալ և ֆինանսական կարողությունները՝ ոռոգման համակարգի կառավարման գործում:

3. Մոնիտորինգի բաղադրիչ

Ենթաձրագրերի և բաղադրիչների իրականացումը պարբերաբար, համակարգված ու ընթացիկ կարգով, ցուցանիշների հսկման կանոնավոր համակարգի միջոցով կենթարկվի մոնիտորինգի: Նման վերլուծությունը թույլ կտա ՀՄՀ-Հայաստանի և ՀՄԿ-ի ղեկավարությանը ծրագրում անհրաժեշտ ճշգրտումներ կատարել՝ Ծրագրի ընդհանուր ազդեցությունը մեծացնելու նպատակով:

Համաձայնագրի III հավելվածում նկարագրված են Համաձայնագրի նպատակը, խնդիրները և արդյունքները: ՄԳՊ այս բաժնում, հենվելով այդ տեղեկությունների վրա, մանրամասնորեն ներկայացվում են կարևորագույն ցուցանիշների, այդ թվում՝ ազդեցության ցուցանիշների և ընթացիկ առաջընթացի ցուցանիշների մոնիտորինգի պլանը: Բացի այդ, յուրաքանչյուր իրականացնող կազմակերպություն (ԻԿ) մանրակրկիտ մոնիտորինգի կենթարկի յուրաքանչյուր բաղադրիչի ներդրումները և արդյունքները: ՀՄՀ-Հայաստանի Կառավարման գրասենյակի ՄԳ պատասխանատուն պատրաստ կլինի խորհուրդներ և աջակցություն ցուցաբերել յուրաքանչյուր իրականացնող կազմակերպություն մոնիտորինգի պլանը կազմելու գործում:

Ցուցանիշներ

Ենթաձրագրերի և բաղադրիչների մակարդակով արդյունքները կչափվեն ցուցանիշների միջոցով: Հավելված Ա-ում բերված՝ Ցուցանիշների սահմանումների աղյուսակի մեջ մանրամասնորեն սահմանված են բոլոր ցուցանիշները, չափման միավորները, տվյալների աղբյուրները, տվյալների հավաքման մեթոդը, տվյալների

Շահառուների թիվը տարբերվում է Ծրագրի 5-րդ տարվա թիրախից, քանի որ այն նաև ներառում է այն ֆերմերներին, ովքեր կվերապատրաստվեն 5-րդ տարում, սակայն նոր մեթոդներ կկիրառեն ընդամենը 6-րդ տարում:

հավաքման հաճախականությունը և տվյալները հավաքելու համար պատասխանատու սուբյեկտը:

Աղյուսակում ներկայացված ազդեցության ցուցանիշները նախնական են, և իրականացնող կազմակերպությունները կարող են դրանց փոփոխություններ առաջարկել նախքան համապատասխան բաղադրիչի իրականացումն սկսելը: Սույն ՄԳ պլանը կփոփոխվի՝ ցուցանիշներում կատարվող և ՀՄԿ-ի կողմից հաստատվող փոփոխությունները արտացոլելու համար:

Ընթացիկ առաջընթացի ցուցանիշները ներդրվել են ՀՄԿ-ի կողմից 2008թ. սկզբին՝ որպես Համաձայնագրի իրականացման սկզբնական շրջանում վերջնական ազդեցության ուղղությամբ ծրագրի առաջընթացի չափման ցուցանիշներ: Սույն վերանայված ՄԳ պլանում ավելացվել են համապատասխան ցուցանիշները:

Ելակետեր և կատարողականի նպատակային ցուցանիշներ

Յուրաքանչյուր ցուցանիշի ելակետային վիճակը և թիրախը ներկայացված են Կատարողականի հսկման աղյուսակներում՝ Հավելված Ա-ում: Թիրախները վերցված են Ծրագրի ներդրումները հիմնավորող վերանայված տնտեսական վերլուծությունից: Ենակառուցվածք բաղադրիչի ՏՕԳ-երը վերանայվել են ՀՄՀ-Հայաստանի տնտեսագետի և Ոռոգման թիմի համատեղ ջանքերով, 2008-2009թթ. Ենթակառուցվածք բաղադրիչի վերանայման ընթացքում, տեխնիկա-տնտեսական ուսումնասիրությունների ավարտից հետո: ՋԴՇ բաղադրիչի թիրախները փոփոխվել են ՀՄՀ-Հայաստանի կողմից վարձված տնտեսագետի տնտեսական վերլուծության հիման վրա, որն ավարտվել է 2009թ. հունիսին: Նախքան կոնկրետ Բաղադրիչի իրականացումը պետք է նշել տվյալ Բաղադրիչի հետ կապված բոլոր ելակետային և թիրախային ցուցանիշները, բացի ՀՄԿ-ի կողմից հաստատված բացառությունների: Անհրաժեշտության դեպքում թիրախները կարող են ՀՄԿ-ի գրավոր հաստատմամբ վերանայվել:

Տվյալների տարանջատում ըստ սեռի, եկամտի և տարիքի

Հետևյալ ցուցանիշները կարող են տարանջատվել ըստ սեռի (կամ անձանց, կամ տնային տնտեսության գլխավորի), տարիքի և/կամ եկամուտների/սպառման, և պետք է այդ կերպ զեկուցվեն ՀՄԿ-ին.

Ջրից դեպի շուկա բաղադրիչ.

- Ջրի բարելավված ներտնտեսային կառավարման մեթոդները կիրառող ֆերմերների թիվը
- Բարձրարժեք գյուղատնտեսության մեթոդները կիրառող ֆերմերների թիվը
- Ջրի ներտնտեսային կառավարման համար իրականացված վերապատրաստումը/տրամադրված տեխնիկական աջակցությունը
- Բարձրարժեք մշակաբույսերի անցման ուղղությամբ վերապատրաստումը/տրամադրված տեխնիկական աջակցությունը:

Ըստ սեռի, եկամտի և տարիքի կանցկացվեն լրացուցիչ վերլուծություններ, որոնք կմշակվեն ազդեցության գնահատմանը համահունչ:

Տվյալների որակի գնահատումներ

Տվյալների որակի գնահատումների միջոցով կստուգվի կատարողականի մասին զեկուցվող տվյալների հավաստիությունը՝ վերլուծելով կատարողականի մասին տվյալների ստույգությունը, արժանահավատությունը, յուրաժամությունը և անաչառությունը: Տվյալների որակի ցանկացած գնահատման նպատակն է ստուգել կատարողականի մասին տվյալների որակը և հավաստիությունը ժամանակի ընթացքում, տարբեր իրականացնող կազմակերպությունների և հաշվետու կառույցների մոտ: Տվյալների որակի այդ գնահատումների հիման վրա կբացահայտվեն նաև այն դեպքերը, երբ տվյալների որակի առավել բարձր մակարդակ ապահովելը հնարավոր չէ՝ պայմանավորված տվյալների հավաքագրման իրողություններով: Այդ գնահատումները կներառեն իրականացնող կազմակերպությունների զեկուցած տվյալները և, անհրաժեշտության դեպքում, տվյալների այլ աղբյուրների, օրինակ՝ Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) տվյալները:

Տվյալների որակի գնահատումների նպատակն է բացահայտել հետևյալը. i) տվյալների որ մասը որակի հետ կապված խնդիրներ ունի (լիարժեքություն, համապատասխանություն, հետևողականություն, հավաստիություն, կրկնողություն, անաչառություն), ii) գրանցված որ տվյալներն են անընդունելի աստիճանի վատ որակի, iii) որոնք են յուրաքանչյուր ոլորտում տվյալների որակի առավել տարածված խնդիրները:

ՀՄՀ-Հայաստանը տվյալների որակի գնահատումներ իրականացնողների հետ պայմանագրեր կկնքի Գնումային պայմանագրին համապատասխան: Այնուհանդերձ, անկախ Գնումային պայմանագրով սահմանված՝ Տեխնիկական առաջադրանքի հաստատման շեմային պահանջից, տվյալների որակի բոլոր գնահատումներն անցկացնողների տեխնիկական առաջադրանքները ենթակա են հաստատման ՀՄԿ-ի կողմից: ՄԳ պատասխանատուն և ՀՄՀ-Հայաստանի Կառավարման գրասենյակի այլ համապատասխան Պաշտոնյաները նույնպես պետք է պարբերաբար ստուգեն տվյալների որակը:

Համաձայնագրի ընթացքում երկու անգամ իրականացվելու է տվյալների որակի գնահատում: Տվյալների որակի գնահատման առաջին փուլի համար պատասխանատու կազմակերպությունն արդեն վարձվել է ՀՄՀ-Հայաստանի կողմից 2008թ. ապրիլին, և նման գնահատումներ է իրականացնելու առաջիկա 18 ամիսների ընթացքում: ՀՄԿ-ն միջազգային փորձագետ է վարձել՝ աջակցելու համար Տվյալների որակի տեղական գնահատողին առաջադրանքի այն մասով, որն առնչվում է ԱՎԾ կողմից իրականացվող Կենսամակարդակի ամբողջականացված

հետազոտությանը: Տվյալներ որակի գնահատման հաջորդ փուլը նախատեսվում է իրականացնել համաձայնագրի վերջին տարում:

Առաջընթացի հաշվետվություններ

ՀՄՀ-Հայաստանը պարտավոր է պարբերաբար հաշվետվություններ պատրաստել երկու Ենթաձրագրերից յուրաքանչյուրի առաջընթացի վերաբերյալ: Առաջընթացի հաշվետվությունները պետք է ներառեն տվյալներ Մոնիտորինգի բաղադրիչի մեջ նկարագրված ցուցանիշների վերաբերյալ, այդ տվյալների վերլուծությունը, ինչպես նաև ծրագրի հաջողություններին և քաղված դասերին առնչվող այլ տեղեկություններ: Այս հաշվետվությունները հասանելի կլինեն հանրությանը ՀՄՀ-Հայաստանի Եռամսյակային տեղեկագրերի, ՀՄՀ-Հայաստանի ինտերնետային կայքի և հաղորդակցության այլ միջոցների օգնությամբ՝ այդ միջոցների առկայությանը զուգընթաց:

Որպես վճարման եռամսյակային հայտի մաս ՀՄՀ-Հայաստանը պետք է ներկայացնի Ցուցանիշների հսկման աղյուսակներ (ՑՀԱ)՝ Համաձայնագրի նպատակների ուղղությամբ առաջընթացին հետևելու համար: ՑՀԱ-ն ներկայացնում է կատարողականի թիրախները (կանխատեսումներ) և հսկում վերջիններիս ուղղությամբ կատարված առաջընթացը (իրական արդյունքներ): ՑՀԱ-ները պետք է ներառեն արդյունքների ստորակարգման բոլոր մակարդակների բոլոր ցուցանիշները, այդ թվում՝ ցածր մակարդակի արդյունքների ցուցանիշները և ընթացիկ առաջընթացի ցուցանիշները: ՀՄՀ-ի վճարման եռամսյակային հայտերի և հաշվետվության փաթեթի ամբողջական տարբերակին ծանոթանալու համար կարող եք այցելել ՀՄԿ ինտերնետային կայք՝ www.mcc.gov :

Հաշվետվության տարեկան հավելվածը լրացուցիչ տեղեկություններ կտրամադրի Համաձայնագրի իրականացման խորհրդակցային գործընթացի, դոնորների համակարգման, քաղված դասերին առնչվող ձեռքբերումների և զարգացումների վերաբերյալ: Նախքան ՀՄԿ-ին ներկայացվելը ԱՄՆ Ֆինանսական տարվա ավարտից երեսուն օր հետո այս հաշվետվությունը պետք է հաստատվի ՀՄՀ-Հայաստանի Կառավարման խորհրդի կողմից:

Առաջընթացի մասին պարբերական հաշվետվություններից գատ ՀՄՀ-Հայաստանը պետք է նաև պատրաստի վերջնական հաշվետվություն, որը կկոչվի **Ծրագրի ավարտի հաշվետվություն (ԾԱՀ)**: ԾԱՀ-ը պետք է կազմվի ՀՄԿ-ի ուղենիշների հիման վրա: Առաջընթացի մասին սովորական հաշվետվությունների բովանդակությունից գատ, ԾԱՀ-ը պետք է ներառի հետևյալը.

- Ծրագրի հակիրճ նկարագրություն՝ առաջարկից մինչև ավարտ,
- Ծրագրի արդյունքների նախնական գնահատականներ,
- Տեղեկություններ շահառուների, այդ թվում՝ նրանց բնութագրիչների, օրինակ՝ սեռի, տարիքի և եկամուտների մակարդակի, ինչպես նաև մասնակցության աստիճանի մասին,

- Ծրագրի կենսունակության նախնական գնահատական, այսինքն, թե որքանով է հնարավոր հասնել ծրագրի կայունության չափման թիրախներին,
- Քաղված դասերը, այդ թվում՝ ՄԳ չափորոշիչների, քաղաքականության, ընթացակարգերի և ծրագրի հետ կապված աշխատակարգի մեջ կատարված հնարավոր փոփոխությունները:

Հատկացումների կապակցումը կատարողականին

Ստորև ներկայացված են ՀՄԿ-ի կողմից ՀՄՀ-Հայաստանին կատարվող ֆինանսական հատկացումների հետ կապված ՄԳ ցուցանիշները:

Գյուղական ճանապարհների վերականգնման ենթածրագիր⁸
Անհարթության միջազգային համաթիվը (IRI) Ենթածրագրի տարածքում գտնվող ճանապարհների համար
Կառավարության բյուջետային հատկացումներ կենսական նշանակության ճանապարհային ցանցի մեջ մտնող հատվածների վերականգնման համար
Ճանապարհների վերականգնված հատվածներ
Ոռոգվող գյուղատնտեսության ենթածրագիր
Բաղադրիչ 1. Ոռոգման ենթակառուցվածք
Ոռոգման համակարգի պահպանության համար
Կառավարության բյուջետային հատկացումներ
Վերականգնված մայր ջրանցքեր
Բաղադրիչ 2. Ջրից դեպի շուկա
ԶՕԸ-երի շահագործման և պահպանության ծախսերի հատուցում ջրի վճարների հաշվին
Ջրի ներտնտեսային կառավարման համար իրականացված վերապատրաստում/տրամադրված տեխնիկական աջակցություն

Այս ցուցանիշները և դրանց թիրախները որպես նախապայմաններ ներառվել են Հատկացումների պայմանագրի 1-ին հավելվածում: Եռամսյակային հատկացումը ստանալու համար ՀՄՀ-Հայաստանը պարտավոր է ընտրված այդ ցուցանիշներից յուրաքանչյուրի համար ապահովել փաստացի այնպիսի մակարդակ, որի շեղումը համաձայնեցված թիրախից չի գերազանցում 10%-ը:

⁸ ԳՃՎԾ նախապայմաններից ոմանք արդեն բավարված էին ՀՄԿ տնօրենների խորհրդի 2009թ. հունիսի դրությամբ: Մակայն որոշումից հետո ԳՃՎԾ-ին առնչվող նախապայմաններն ուժը կորցրել են: ՀՄՀ-Հայաստան. Մոնիտորինգի և գնահատման պլան

4. Գնահատման բաղադրիչը

Գնահատումը ՀՄՀ-Հայաստան ծրագրի կարևորագույն բաղադրիչ է: Զարգացմանն աջակցելու ոլորտում ՀՄԿ-ի մոտեցման հիմնական սկզբունքներից մեկն այն է, որ ՀՄԿ-ն հավատարիմ է իր ծրագրերի ազդեցության խորը և համակողմանի գնահատումների անցկացմանը, երբ հնարավորության դեպքում կիրառվում են այնպիսի մեթոդներ, որոնցով որոշվում է, թե արդյոք տվյալ արդյունքներն արժանահավատորեն կարելի է վերագրել ՀՄԿ-ի կոնկրետ ծրագրերին: Բացի այդ, գնահատման հիման վրա կարելի է բարելավել ծրագրի կառավարումը և ապագայում ծրագրի իրականացման համար դասեր քաղել:

Միջանկյալ և վերջնական գնահատումներ

Ծրագիրը գնահատվելու է ըստ նրա, թե որքանով են իրականացված աշխատանքները նպաստել Համաձայնագրի նպատակի կատարմանը, այն է՝ գյուղատնտեսական ոլորտում եկամուտների ավելացման միջոցով գյուղական աղքատությունը կրճատվել է: (Գնահատման մանրակրկիտ պլանը կցվում է):

Միջանկյալ գնահատումները և Ծրագրի ավարտին՝ վերջնական գնահատումներն իրականացնելու համար ՀՄՀ-Հայաստանը ներգրավելու է անկախ գնահատողներին: Միջանկյալ և վերջնական գնահատումների դիմաց վճարումը կատարվելու է Հայաստանի ՄԳ բյուջեից: Այս պայմանագրերը պետք է համակարգվեն ՀՄԿ-ի բյուջեից վճարվող փոխկապակցված պայմանագրերի հետ:

Գնահատման միջանկյալ ուսումնասիրությունների միջոցով գնահատվելու է Համաձայնագրի նպատակների, խնդիրների և արդյունքների կատարման ուղղությամբ առաջընթացը: Վաղ շրջանում դասեր են քաղվելու, և բացահայտվելու են ակնկալվող արդյունքների և փաստացի ձեռքբերումների միջև առկա էական տարբերությունները, այդ թվում՝ փաստացի ու կանխատեսվող ցուցանիշների միջև շեղումների պատճառները: Գնահատման համար օգտագործվելիք ընդհանուր մեթոդաբանությունը որոշվելու է նախապես համաձայնեցված աշխատանքային առաջադրանքի հիման վրա գնահատումն անցկացնելու համար պատասխանատու սուբյեկտի կողմից:

Ազդեցության վերջնական գնահատումները կանդրադառնան առնվազն հետևյալ խնդիրներին.

- Ծրագրի գործունեության արդյունավետությունը Համաձայնագրի նպատակների կատարման առումով,
- Չափելի ազդեցությունը ՀՄԿ-ի օժանդակությանը վերագրելու հնարավորությունը,
- Նպատակների, խնդիրների և թիրախների բարեհաջող կատարման կամ չկատարման պատճառները,

- Ծրագրի չնախատեսված արդյունքները (դրական և բացասական),
- Արդյունքների երկարաժամկետ կայունությունը,
- Տնտեսական օգտակարության վերահաշվարկված գործակիցները, համեմատությունը սկզբնապես հաշվարկված մակարդակների հետ, և տարբերությունների գնահատում:
- Քաղված այն դասերը, որոնք կիրառելի են նմանատիպ այլ ծրագրերի նկատմամբ:

Չնախատեսված գնահատումներ և հատուկ ուսումնասիրություններ

ՀՄԿ-ն կամ ՀՄՀ-Հայաստանն իրավասու են Ենթածրագրերի, Ենթածրագրերի բաղադրիչների կամ ողջ Ծրագրի չնախատեսված գնահատումներ պահանջել նախքան Համաձայնագրի ժամկետի ավարտը, որոնք պետք է իրականացվեն Գնումային պայմանագրին համապատասխան՝ դրսից վարձված սուբյեկտի կողմից: Ներկայումս նախաձեռնվել են մի շարք նմանատիպ հետազոտություններ, որոնք ներառում են հետևյալը.

1. ***Գյուղատնտեսական տվյալների գնահատում՝*** գյուղատնտեսության ոլորտի իրավիճակի մասին ՀՄՀ-Հայաստանին ելակետային տվյալներ տրամադրելու նպատակով տարբեր աղբյուրներից ստացված գյուղատնտեսական տվյալները համադրելու և համեմատելու համար:

2. ***Գործընթացի որակական վերլուծություններ,*** որոնք կլրացնեն մեկ այլ անկախ խորհրդատուի կողմից իրականացվող ազդեցության գնահատմանը: Գործընթացի վերլուծությունները կգրանցեն ՀՄՀ-Հայաստանի ծրագրային միջամտությունները, կգնահատեն վերջիններիս իրականացումը, կպարզեն ծրագրի/գործողության նախագծի ու իրականացման թույլ և ուժեղ կողմերը: Գործընթացի որակական վերլուծությունները կարող են օգտագործվել վերևում նկարագրված միջանկյալ և վերջնական գնահատման պահանջները բավարարելու համար:

3. ***Աղքատության կանխատեսումների թարմացում,*** որը ՀՄՀ Հայաստանին կտեղեկացնի, թե ինչպես են Ծրագրի ծավալների փոփոխությունները և Տնտեսական օգտակարության գործակիցների վերանայված հաշվարկներն ազդում ծրագրի ակնկալվող օգուտների և գյուղական աղքատության/եկամուտների ցուցանիշային թիրախների վրա:

5. Ենթադրություններ և ռիսկեր

Հայաստանի ՀՄՀ ծրագրի տրամաբանությունը հիմնված է Ենթածրագրերի առանձին բաղադրիչների և գյուղատնտեսական ոլորտի տնտեսական առաջընթացի բարելավման միջոցով գյուղական աղքատության կրճատման միջև առկա կապերի վերաբերյալ կոնկրետ ենթադրությունների վրա: Ենթադրությունները հաշվի են առնվում տնտեսական (տնտեսական օգտակարության) վերլուծության մեջ, իսկ ռիսկերը արտաքին գործոններ են, որոնք, հնարավոր է, ազդեն ծրագրի հաջողության վրա:

Ենթածրագիր 1. Գյուղական ճանապարհների վերականգնում

Ենթադրություններ

ՀՄՀ-Հայաստանն ի վիճակի կլինի վերականգնել տնտեսապես արդյունավետ բոլոր ճանապարհային հատվածները:

Տրանսպորտային միջոցների շահագործման ծախսերը կնվազեն, որի արդյունքում տրանսպորտային միջոցներն ավելի շատ կօգտագործվեն, որի շնորհիվ մարդիկ ժամանակ կտնտեսեն և կիջեն պահպանության ծախսերը:

Ավելի լավ գյուղական ճանապարհներ ունենալու դեպքում կավելանա գյուղատնտեսական արտադրանքը շուկաներ տանող երթևեկության ծավալը: Հասարակական տրանսպորտը կգարգանա՝ բարելավելով բնակչության համար սոցիալական ծառայությունների հասանելիությունը:

Աղքատ ֆերմերները կօգտվեն շուկաների ավելի հասանելի դառնալու հանգամանքից:

Ռիսկեր

Դոլարի շարունակական արժեզրկումը և շինարարական նյութերի աճող գները կհանգեցնեն ծրագրի ծավալների կրճատման:

Անհարթության միջազգային համաթվի (IRI) մակարդակի բարելավման արդյունքում ճանապարհային երթևեկության ծավալը չի աճի այնքան, որքան ակնկալվում էր:

Երթևեկության ծավալը չի աճի՝ պայմանավորված արտադրանքի նկատմամբ պահանջարկի խնդիրներով: Հանրային տրանսպորտը չի բարելավվի՝ պայմանավորված նախատեսվող գնով տրանսպորտի ծառայությունների նկատմամբ պահանջարկի անբավարարությամբ, և մարդկանց համար չի հեշտանա դպրոցներ, հիվանդանոցներ և այլ սոցիալական ծառայություններ հասնելը:

Ավելի լավ գյուղական ճանապարհների դեպքում բուն ֆերմայում կատարվող վաճառքի գները չեն բարձրանա, և փոխարենը կավելանա վերավաճառողների շահույթը և/կամ կիջնի գինը վերջնական սպառողների համար:

Ենթաձևեր 2. Ոռոգվող գյուղատնտեսություն

Ենթադրություններ

Ռիսկեր

Բաղադրիչ 1: Ենթակառուցվածքի վերականգնում

ՀՄՀ-Հայաստանն ի վիճակի կլինի վերականգնել բոլոր տնտեսապես արդյունավետ ոռոգման ենթակառուցվածքները:

Դուրսի շարունակական արժեքկումը և շինարարական նյութերի աճող գները կհանգեցնեն ծրագրի ծավալների կրճատման:

Սկզբնական պլանով նախատեսված բոլոր գործունեությունները և միջոցառումները լիովին կիրականացվեն, որը ֆերմերներին թույլ կտա ավելացնել իրենց ոռոգվող հողատարածքները:

Լիարժեք տեխնիկական գնահատման արդյունքում պարզ կդառնա, որ ոռոգման որոշ գործունեություն, հնարավոր է՝ ջրամբարները և Արարատյան դաշտավայրում դրեժանի համակարգի վերականգնումը, չափազանց ծախսատար կլինեն իրագործման տեսակետից, որը կարող է պայմանավորված լինել բնապահպանական գործոններով:

Ֆերմերները կմշակեն իրենց՝ նոր ոռոգվող հողերը, որի շնորհիվ ավելի մեծ եկամուտներ կստանան:

Ֆերմերները չեն ավելացնի իրենց կողմից հողօգտագործումը՝ պայմանավորված աշխատուժի, կապիտալի և այլ խոչընդոտներով, կամ գյուղատնտեսությունից դուրս զբաղվածություն գտնելու հետևանքով:

Ֆերմերները ոռոգումն ավելի արդյունավետ, հուսալի և կայուն կհամարեն, և արդյունքում կանցնեն ավելի բարձրարժեք մշակաբույսերի, որոնց համար պահանջվում է արդյունավետ ոռոգում:

Ֆերմերների կողմից վստահության պակասի կամ անարդյունավետ կառավարման հետևանքով ոռոգման ծառայությունները բավականաչափ չեն բարելավվի, որպեսզի առաջացնեն բերքատվության փոփոխություններ:

Ոռոգման վերականգնումից հետո ֆերմերները երեք տարվա ընթացքում աստիճանաբար կանցնեն ավելի բարձրարժեք մշակաբույսերի, որի շնորհիվ կավելանան նրանց եկամուտները:

Ֆերմերներն ավելի բարձրարժեք մշակաբույսերի արտադրության կանցնեն մի քանի տարի հետո միայն, իսկ որոշ ֆերմերներ ընդհանրապես չեն անցնի ավելի բարձրարժեք մշակաբույսերի՝ պայմանավորված բերքի գների անկմամբ, բնակլիմայական բացասական պայմաններով, վերապատրաստման պակասով, կապիտալի անբավարարությամբ և/կամ ռիսկերի հետ կապված մտավախություններով:

Բաղադրիչ 2. Ջրից դեպի շուկա

Ֆերմերները կբարելավեն ջրի ներտնտեսային կառավարումը, կմշակեն ավելի բարձրարժեք մշակաբույսեր և կօգտագործեն հետքերքահավաքային աշխատանքի ավելի լավ տեխնոլոգիաներ:

Վարկային միջոցները ֆերմերներին հնարավորություն կընձեռեն նոր մեթոդներ կիրառել և ավելացնել մթերքի վերամշակման ծավալները:

Կձևավորվեն Ֆերմերային խմբեր/միություններ, ինչը կնպաստի պահեստների օգտագործմանը և կհեշտացնի մթերումը վերամշակող ձեռնարկություններին:

Ֆերմաների եկամուտները կաճեն նոր մեթոդների օգտագործման արդյունքում:

Նոր մեթոդներից մեկի կամ մի քանիսի օգտագործման ցուցանիշներն ավելի ցածր կլինեն, քան նախատեսված էր՝ պայմանավորված ֆերմերների շրջանում ռիսկերի հետ կապված մտավախություններով:

Անարդյունավետ կառավարման կամ այլ հանգամանքների հետևանքով վարկերի չմարման ցուցանիշը բարձր կլինի: Ֆինանսական կառույցների անարդյունավետ լինելու կամ բարձր տոկոսադրույքների պատճառով ֆերմերներին վարկեր չեն տրամադրվի, նույնիսկ սուբսիդավորվելու պարագայում, որի հետևանքով վարկերի նկատմամբ բավարար պահանջարկ չի ձևավորվի, քանի որ ֆերմաների շահույթը չի բավականացնի վարկերի գծով վճարումներ կատարելու համար:

Ֆերմերները կդիմադրեն կոոպերացիայի ցանկացած փորձի՝ պայմանավորված կոլեկտիվացման անցյալի փորձով:

Ֆերմաների եկամուտները չեն աճի՝ պայմանավորված գների տատանումներով, վատ բնակլիմայական պայմաններով, միջնորդների շահույթով կամ այլ արտաքին գործոններով, և զբաղվածության մակարդակը չի բարձրանա:

6. ՄԳՊ իրականացումը և կառավարումը

Նախքան Ենթածրագրերի և Ենթածրագրերի բաղադրիչների իրականացումը սկսելը ՀՄՀ-Հայաստանն աշխատակիցներին և ենթածրագիր իրականացնող կազմակերպություններին բացատրելու է, թե ինչպես է չափվելու ենթածրագրերի կատարումը, և անցկացնելու է ՄԳՊ կատարելու համար անհրաժեշտ վերապատրաստում: ՀՄՀ-Հայաստանը նաև քննարկելու է շահառուներից, այդ թվում՝ Շահառուների խորհրդից ստացված դիտողությունները և առաջարկները: ՀՄԿ-ն և ՀՄՀ-Հայաստանը կարող են ըստ անհրաժեշտության ճշգրտումներ մտցնել ՄԳՊ-ի մեջ՝ պայմանով, որ ՄԳՊ ցանկացած փոփոխություն կամ լրացում պետք է հաստատվի ՀՄԿ-ի կողմից և չհակասի Համաձայնագրի և Կողմերի միջև կնքված բոլոր վերաբերելի Լրացուցիչ պայմանագրերի պահանջներին:

Պարտականությունները

ՀՄՀ-Հայաստանի Մոնիտորինգի և գնահատման ղեկավարի (ՄԳ ղեկավար) կողմից իրականացվելիք ՄԳ ընդհանուր պարտականությունները ներառելու են հետևյալը.

- Մ և Գ համակարգի ստեղծման, այդ թվում՝ տվյալների հավաքման, տվյալների վերլուծության և հաշվետվության համակարգերի հիմնում,
- տվյալների և որակի և հուսալիության բարելավմանը զուգընթաց ՄԳ պլանի և տնտեսական օգտակարության վերլուծության ճշգրտման ապահովում,
- ՀՄԿ-ի և արտաքին խորհրդատուների համագործակցությամբ ազդեցության գնահատման ռազմավարության նախագծում,
- ՄԳ պայմանագրերի նախապատրաստման և գնումների անցկացման առումով համագործակցություն Գնումների ղեկավարի հետ,
- անհրաժեշտության դեպքերում տվյալների տարանջատում ըստ սեռի, տարիքի և եկամուտների,
- տեղային այցերի, ծրագրի հաշվետվությունների և երկրորդային տվյալների վերանայման միջոցով մասնակցություն մոնիտորինգին,
- աջակցություն փորձի փոխանակմանը և տեղեկատվության տարածմանը
- տվյալների որակի պարբերական անկախ ուսումնասիրությունների կազմակերպում և վերահսկում:

ՄԳՊ վերանայումը և փոփոխումը

ՄԳՊ-ն մշակվել է որպես ժամանակի ընթացքում փոփոխվող փաստաթուղթ, և որպես այդպիսին պետք է համապատասխանեցվի ծրագրի գործունեության

փոփոխություններին և կատարողականի մոնիտորինգային թիրախների ու չափանիշների բարելավումներին: Յուրաքանչյուր տարվա չորրորդ եռամսյակի ընթացքում կամ ըստ անհրաժեշտության ՀՄՀ-Հայաստանի ՄԳ ղեկավարը և ՀՄԿ-ի ՄԳ ստորաբաժանման ներկայացուցիչը քննելու են, թե որքանով է ՄԳ Պ կատարումը համապատասխանել սահմանված նպատակներին:

Այս վերանայման նպատակն է ապահովել ՄԳ պլանի միջոցով ծրագրի կատարողականի ստույգ չափումը և ենթածրագրերի կառուցվածքում անհրաժեշտ փոփոխությունների մասին կենսական տեղեկատվության ստացումը: Վերանայման նպատակն է ապահովել, որպեսզի ՄԳ Պ-ն.

- արտացոլի, թե արդյոք իրականացման արդյունքները ստացվում են նախատեսված տրամաբանական հերթականությամբ,
- ստուգի, թե արդյոք ցուցանիշների սահմանումները ճշգրիտ են և արդիական,
- ստուգի, թե արդյոք ՄԳ ցուցանիշները ստույգորեն արտացոլում են ծրագրի կատարողականը,
- թույլտվության դեպքում ճշգրտի թիրախները, եթե և
- ըստ անհրաժեշտության ավելացնի ցուցանիշներ, որոնք թույլ կտան հետևել մինչ այդ չչափված արդյունքների կատարմանը:

ՄԳ Պ-ն վերանայվելու է ՀՄՀ-Հայաստանի կողմից՝ ՀՄԿ-ի ՄԳ թիմի համաձայնությամբ, երբ վերանայման արդյունքում բացահայտվի փոփոխելու անհրաժեշտությունը: Վերանայված ՄԳ Պ-ն ներկայացվելու է ՀՄՀ-Հայաստանի Կառավարման խորհրդի /նշանակալի փոփոխությունների դեպքում/ և ՀՄԿ-ի հաստատմանը:

ՄԳ Կառավարման տեղեկատվության համակարգը

ՀՄՀ-Հայաստանը կստեղծի և կվարի կառավարման տեղեկատվության համակարգ (ԿՏՀ), որի միջոցով հետևելու է ծրագրի առաջընթացին և ժամանակին ու ստույգ հաշվետվությունների հիման վրա մոնիտորինգի է ենթարկելու յուրաքանչյուր բաղադրիչի ազդեցությունը: ԿՏՀ-ն մշակվելու և ներդրվելու է ՀՄԿ-ի ՄԳ-ին համապատասխան: Կատարողականի և իրականացման տվյալները պահպանվելու են համակարգում, և ժամանակին պատրաստվելու են առաջընթացի մասին հաշվետվություններ: Այս համակարգը կարող է նաև համադրվել ֆինանսական հաշվետվությունների համար ստեղծված համակարգի հետ, և ներդրումների ու արդյունքների մոնիտորինգի ցուցանիշների հաշվառումը կարող է օգտագործվել ենթածրագրի գործունեության առաջընթացին հետևելու նպատակով:

Համակարգը մշակվելու է՝ հաշվի առնելով հետևյալ գործոնները.


- Կազմակերպական կառուցվածք, կադրային ապահովում և տվյալների հավաքման գործընթացներ

- Համակարգի նախագծում, այդ թվում՝ մուտքեր, համակարգչային ծրագրեր և ելքեր
- Կատարողականի և ազդեցության ցուցանիշներ
- ՄԳ աշխատանքային ծրագրի արդյունքներ և առաջարկվող բյուջետային հատկացումներ
- Կառավարման խորհրդին և ՀՄԿ-ին ՀՄՀ-Հայաստանի կողմից ներկայացվող հաշվետվությունների ժամանակացույցը:

Բացի այդ, ԿՏՀ-ն օգտագործվելու է Ծրագրի ցուցանիշների հիման վրա հատուկ նպատակային հաշվետվություններ պատրաստելու համար: Դա թույլ կտա արագորեն և ստանդարտ ձևաչափով ՀՄՀ-Հայաստանի ինտերնետային կայքում հրապարակել մոնիտորինգի և գնահատման տվյալները:

ՄԳ տվյալների հավաքագրման համակարգումը

ՀՄՀ-Հայաստանը տվյալներ և հաշվետվություններ է ստանալու տարաբնույթ կառույցներից, այդ թվում՝ ենթածրագրեր իրականացնող կազմակերպություններից, Ազգային վիճակագրական ծառայությունից և հետազոտություններն իրականացնող կազմակերպություններից: Հետևյալ գծապատկերում ներկայացված են տեղեկատվության հոսքերը նշված կազմակերպություններից դեպի ՀՄՀ-Հայաստան, մինչդեռ Ցուցանիշների սահմանումների աղյուսակների մեջ (Հավելված) ներկայացվում է, թե ինչ տեղեկություններ պետք է հավաքվեն, և ինչ տեղեկություններ պետք է զեկուցվեն յուրաքանչյուր կառույցի կողմից:⁹



⁹ Գծագրի նպատակն է ներկայացնել տեղեկատվության հոսքը, այլ ոչ՝ կազմակերպությունների հարաբերությունների ստորակարգությունը:

7. Բյուջե

Համաձայնագրի հնգամյա ժամանակահատվածի համար առաջարկվող ՄԳ գործունեության հաշվարկային արժեքը կկազմի մոտ 5.1 միլիոն ԱՄՆ դոլար:¹⁰ Ստորև բերվող աղյուսակը ներկայացնում է Համաձայնագրի ընթացքում իրականացվելիք ՄԳ գործողություններն՝ ըստ վերլուծությունների տեսակների և արժեքի:

Հայաստան. Համաձայնագրով մոնիտորինգի և գնահատման համար նախատեսված բյուջեն (հազար դոլար)

Գործունեություն	Ընդամենը
Մոնիտորինգի համակարգի ցուցանիշների մշակում և վերահսկում	
Տեղեկատվության կառավարման համակարգ	80
Հաշվետվություններ	15
Վերապատրաստում	50
Տվյալների որակի գնահատում	179
Ընդամենը	324
Ազդեցության գնահատման հետազոտություններ	
Ազգային վիճակագրական ծառայություն	1,779
Կենսամակարդակի ամբողջականացված հետազոտություն	1,749
Համայնքների հետազոտություն	30
Գյուղատնտեսական գործունեության հետազոտություն	490
ԶՕԸ-երի հետազոտություն	180
Ընդամենը	2,449
Հատուկ հետազոտություններ և վերլուծություններ	
Աղքատության ցուցանիշների թարմացում	22
ԿՄԱՀ Աղքատության ճշգրտում	45
Գործընթացի որակական գնահատում 1	120
Գործընթացի որակական գնահատում 2	195
Գյուղատնտեսական տվյալների վերլուծություն	45
ԶՕԸ-երի ԱՏՀ վերլուծություն	100
Ծրագրի վերջնական գնահատում	100
Ընդամենը	637
Այլ ¹¹	1,673
ԸՆԴԱՄԵՆԸ	5,083

¹⁰ ՄԳ բյուջեն չի ներառում ՀՄՀ-Հայաստանի կառավարման գրասենյակի ՄԳ աշխատակիցների աշխատավարձը և գործուղման ծախսերը, քանի որ վերջիններս ներառված են վարչական բյուջեի մեջ:
¹¹ ՀՄՀ-Հայաստանը դեռ պետք է հստակեցնի Ծրագրի մոնիտորինգի/գնահատման համար անհրաժեշտ տվյալների հավաքագրմանն առնչվող որոշ լրացուցիչ աշխատանքներ/հետազոտություններ

ՄԳ Պ-ով նաև նախատեսվում է ՀՄԿ-ի միջոցներով ֆինանսավորման համակարգում՝ ազդեցության գնահատմամբ զբաղվող ՀՄՀ-Հայաստանի վերլուծաբանների հետ համագործակցելու և Համաձայնագրի ավարտին հաջորդող տարվա՝ 2011 թ. ընթացքում ազդեցության գնահատումներն ավարտելու համար ռեսուրսներ տրամադրելու նպատակով:

8. Հավելվածներ.

Ա. Ցուցանիշների սահմանումների աղյուսակներ և կատարողականի հսկման աղյուսակներ

Ցուցանիշների սահմանումների աղյուսակներ.

Համաձայնագրի նպատակի ցուցանիշներ						
Ծրագրի նպատակը	Ցուցանիշը	Ցուցանիշի սահմանումը	Միավոր	Աղբյուրը/ պատասխանատու սուբյեկտը	Մեթոդաբանությունը	Տվյալների հավաքման հաճախա- կանությունը
Գյուղական աղքատության կրճատում	Աղքատության ցուցանիշը գյուղական բնակավայրերում	Գյուղական բնակավայրերում աղքատության ցուցանիշը՝ այնպես, ինչպես չափվում է Հայաստանի Ազգային վիճակագրական ծառայության կողմից	Տոկոս	Ազգային վիճակագրական ծառայություն	Տնային տնտեսությունների հետազոտություն (կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն)	Ամենամյա
Գյուղատնտեսական ուղորտում տնտեսական արդյունքի ավելացում	Գյուղական բնակավայրերում գյուղատնտեսությունից ստացվող իրական եկամուտների փոփոխություն	Գյուղատնտեսական արտադրանքի վաճառքից ստացվող իրական եկամուտների փոփոխությունը տնային տնտեսության մեկ անդամի հաշվով՝ համաթիվի համեմատ:	համաթիվը 2005 = 100	Ազգային վիճակագրական ծառայություն	Տնային տնտեսությունների հետազոտություն (կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն)	Ամենամյա

Գյուղական ճանապարհների վերականգնման ենթաձրագիր

Օրագրի նպատակը	Ցուցանիշը	Ցուցանիշի սահմանումը	Միավոր	Աղբյուրը/ պատասխանատու սուբյեկտը	Մեթոդաբանությունը	Տվյալների հավաքման հաճախա-կանություն
Ազդեցություն						
Տրանսպորտային ծախսերի կրճատում	Անհարթության միջազգային համաթիվը (IRI) պիլոտային ճանապարհների համար	Կշռված համաթիվ՝ չափելու համար ճանապարհների անհարթությունը (կապակցված է տրանսպորտային ծախսերի հետ)	մ/կմ	Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն	Պիլոտային ճանապարհահատվածների վրա ենթաձրագրից առաջ և հետո ճանապարհների անհարթության չափում	Մեկ անգամ
Տրանսպորտային միջոցների ակտիվության ավելացում	Միջին օրական երթևեկությունը պիլոտային ճանապարհի տարածքում	Պիլոտային ճանապարհի հատվածների վրա տրանսպորտային միջոցների միջին օրական թիվը՝ կշռված ճանապարհի համապատասխան հատվածների երկարությամբ	Տրանսպորտային միջոցների թիվը	Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն	Երթևեկության հետազոտություններ	Մեկ անգամ
Ճանապարհային ցանցի շարունակական պահպանություն	Կառավարության բյուջետային հատկացումներ կենսական նշանակության ճանապարհային ցանցի մեջ մտնող հատվածների վերականգնման համար Կառավարության բյուջետային հատկացումներ ողջ ճանապարհային ցանցի ընթացիկ պահպանության համար	Պետական բյուջեի ծախսերը կենսական նշանակության ճանապարհային ցանցի մեջ մտնող ճանապարհների հատվածների վերականգնման վրա Պետական բյուջեի ծախսերը ողջ ճանապարհային ցանցի մեջ մտնող ճանապարհների հատվածների ընթացիկ պահպանության վրա	Միլիոն դրամ Միլիոն դրամ	Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն	Պետական բյուջեի ծախսային մասի կատարման տվյալներ Պետական բյուջեի ծախսային մասի կատարման տվյալներ	Ամենամյա Ամենամյա
Արդյունքներ						
Վերականգնված						

Ճանապարհների կիլոմետրեր	Պիլոտային ծրագրով ճանապարհների վերականգնված հատվածներ	Ճանապարհահատվածների վերականգնումն ավարտված է. Հանձնման ընդունման ակտերը հաստատված են ՀՄՀ կողմից (պիլոտային ծրագիր)	Կիլոմետր	Հայաստանի ավտոմոբիլային ճանապարհների տնօրինություն	Վարչական տվյալներ, Ենթածրագրի իրականացման փաստաթղթեր	Ամենամյա
Ընթացիկ առաջընթացի ցուցանիշներ						
	Փաթեթ 1: Փաթեթ 1-ի վերջնական նախագծման և ՇՄԱԳ/ԲԿՊ փաստաթղթերը	ՍՎԵՔՈ-ի կողմից (ՀՄՀ-ի խորհրդատու) Փաթեթ 1-ի վերջնական նախագծման և ՇՄԱԳ/ԲԿՊ փաստաթղթերի՝ ՀՄՀ-ին ներկայացման ամսաթիվը	ամսաթիվ	ՀՄՀ-Հայաստան	վարչական. ծրագրի իրականացման փաստաթղթեր	մեկ անգամ
	Փաթեթ 1: Փաթեթ 1-ի սուպերվիզիան իրականացնող կազմակերպությունից ստանալ մոբիլիզացման հաշվետվությունը	Սուպերվիզիան իրականացնող կազմակերպության կողմից Փաթեթ 1-ի սուպերվիզիայի համար մոբիլիզացման հաշվետվության ՀՄՀ-ին ներկայացման ամսաթիվը	ամսաթիվ	ՀՄՀ-Հայաստան	վարչական. ծրագրի իրականացման փաստաթղթեր	մեկ անգամ
	Փաթեթ 1: Փաթեթ 1-ի շինարարական կապալառուի մոբիլիզացում	Փաթեթ 1-ի շինարարական կապալառուի կողմից մոբիլիզացման հաշվետվության ՀՄՀ-ին ներկայացման ամսաթիվը	ամսաթիվ	ՀՄՀ-Հայաստան	վարչական. ծրագրի իրականացման փաստաթղթեր	մեկ անգամ
	Փաթեթ 2: Փաթեթ 2-ի	ՍՎԵՔՈ-ի կողմից (ՀՄՀ-ի	ամսաթիվ	ՀՄՀ-Հայաստան	վարչական. ծրագրի	մեկ անգամ

